№ 111 Շաբաթ Հոկտեմբերի 3 1887 Շաբաթ Հոկտեմբերի 3 № 111

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինտելիգենցիա և ամբոխ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բագուից. Նամակ Խարկովից. Նամակ Աղստաֆայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ ԵՒ ԱՄԲՈԽ

Ամբոխը աղքատ է և խաւար, ամբոխը հարստահարված է վաշխառուներից,—ահա այն գանգատը, որ լսվում է Ռուսաստանի ամեն կողմերում, լսվում է գրական-նուէթեան և կեանքի մէջ: Ամբոխի, աշխատող դասակարգի ոյժերը և նրա աշխատանքը պէտք է հաստատ հիմքերի վրա կազմակերպել,—ահա խօսքեր, որոնց յաճախ է պատահում լսելու: Բայց ո՞վ և ի՞նչպէս պէտք է օգնի ամբոխին գուրս գալու իր տգիտութիւնից, իր խաւար դրութիւնից, իր նիւթական ճնշված, չքաւոր վիճակից՝ ինտելիգենցիան այդ պէտք է անի, թէ ինքն ամբոխը, իր միջից յայտնվող անհատների միջոցով, հետզհետէ գիտակցութեանը հասնելով: Ոմանք առաջին մտքի պաշտպան են, միւսները երկրորդի:

Նորերումս լոյս տեսան ռուսաց գրականութեան մէջ երկու նշանաւոր գրուածներ, որոնք ուշադրի վերաբերվում են մեր այստեղ ակնարկած հարցին:

Այդ գրուածներից մէկն է պ. Տիմոշչենկօի „Կռիւը հարստահարութեան դէմ“ վերնագրով վէպը (Борьба съ хищничествомъ.—Тимощенко). Այդ վէպի մէջ հեղինակը ներկայացնում է ռուս գիւղացիների երկու տիպեր, որոնք տեսնելով թէ գիւղական ամբոխը հարստահարված է գիւղական վաշխառուներից, մտածում են առնել վրէժ իրանց գիւղը այդ տեսակ հարստահարիչներից: Երկու հերոսները շատ հարուստ գիւղացիներ լինելով, գործ են դնում իրանց կապիտալները գիւղացիների բարեկեցութեան չափը բարձրացնելու վրա. նրանք առնում են հողեր, որոնց յատկացնում են գիւղի համայնքին, կազմակերպում են մի գիւղական ընդարձակ ընկերակցութիւն, որին և իրանք են մտնում, բարձրացնում են գիւղի անտեսութիւնը, մտցնելով այլ և այլ անտեսական արդիւնաբերութիւններ գիւղի մէջ, որոնցից համ իրանք են շահվում, համ էլ ամբողին օգուտ են տալիս գիւղացիներին, բարձրացնելով նրանց անտեսական բարեկեցութեան չափը և ազատելով նրանց այլ և այլ անխիղճ հարստահարիչներից և վաշխառուներից, վերջապէս հիմնարկում են դպրոցներ գիւղերի մէջ և այլն, և այդ բոլորը անում են գիւղական ընկերակցութեան օգնութեամբ, որի գոյութեանը հիմք են դնում իրանց անձնական կապիտալներով:

Երկրորդ գրուածքը, որ նորերումս լոյս տեսաւ ռուսաց գրականութեան մէջ և որ շօշափում է նոյն հարցը՝ այն է գիւղական ամբոխը խաւար դրութիւնից և անտեսական նեղ վիճակից դուրս բերելու հարցը,—դա աշխարհահռչակ, այժմ վախճանված, ռուս բժիշկ Պիրագովի յիշատակարանն է, որը հրատարակեց նորերումս „Русская Старина“ ամսագիրը:

Պիրագով նկարագրում է վաթսունհոգուց թաղականները, երբ առաջին անգամ, անցեալ թագաւորութեան վերանորոգիչ ուղղութեան ներգործութեան տակ, նշմարելի ե-ղաւ ռուս ինտելիգենցիայի, երկու սեռի ռուս երիտասարդութեան մէջ՝ ձգտում հասարակ ժողովրդին, ամբոխին մօտենալու, նրա վրա ներգործելու, նրա ինքնաճանաչութիւնը զարթեցնելու և նրա անտեսական ընկած վիճակը բարձրացնելու: Հեղինակը խոստովանվում է, որ ռուս երիտասարդութիւնը շատ լուշոր սխալներ գործեց, ծայրահեղութեան, նոյն իսկ այլանդակ դաղափարների հասաւ և իր անտակատութեամբ ինքն փչացրեց այն գործը, որին նուիրվել էր ուզում, անունը կոտրեց այն գործի, որին ծառայել էր կամենում, աննկարելի չափազանցութիւններ գործելով թէ կիրակեայ դպրոցները ղեկավարելու գործում, թէ իր գործունէութեան ուրիշ ասպարէզներում, որի հետևանքը և եղաւ կառավարութեան հրամանով կիրակեայ դպրոցների փակելը,—բայց այնու ամենայնիւ Հանգուցեալ Հեղինակի կարծիքն այն է, որ ինտելիգենցիան պէտք է գործի ամբոխի մէջ, միայն հարկաւոր է, որ նա ունենայ գործունէութեան մի նախատեսածված, որոշված ծրագիր, հարկաւոր է որ այդ ծրագիրը ղեկավորի ձեռքով միակված և կառավարութիւնից հաստատված լինի, հարկաւոր է որ երիտասարդութիւնը ղեկավորի հետ միասին ձեռք ձեռքի տուած, համերաշխ կերպով և որոշված, յայտնի ծրագրով, անշեղ ուղղութեամբ, կազմակերպված ոյժով առաջ գնան ու գործեն ամբոխի մէջ, նրա տնտեսական, բարոյական և մտաւոր վիճակը բարձրացնելու նպատակով:

Միաժամանակ լոյս տեսած երկու գրուածների՝ Տիմոշչենկօի և Պիրագովի գրուածների նպատակը մի է՝ միջոց ցոյց տալ ամբոխի տնտեսական, բարոյական և մտաւոր կեանքի մակերևոյթը բարձրացնելու, միայն նրանց առաջարկած միջոցները տարբեր են:

Հանգուցեալ Պիրագով առաջարկում է որ ռուս ամբոխը զարգանայ, եթէ այդպէս կարելի է ասել, դրսի ներգործութեան տակ, այն է կրթված երիտասարդութեան և ղեկավորի ինքնաւար հաստատութիւնների օգնութեամբ ու ղեկավարութեամբ, իսկ Տիմոշչենկօ կուսակից է հանդիսանում տնտեսական ամբոխի ինքնաօգնութիւն:

Մեր կարծիքով երկուսն էլ հիմք ուսումնասիրված միջոցներից թէ առաջինը և թէ երկրորդը՝ համակրելի և գործադրելի են: Յանկալի է որ երկուսն էլ գործադրվին և իրականութիւն ստանային:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 22 սեպտեմբերի

Ամրան վերջի օրերը հարկադրեցին ինձ փոքր ինչ ծուլանալ, ուստի չը կարողացայ մի քանի չաբաթ թղթակցել, այժմ վերսին սկսենք, մէկ ընդմէջ հին ու նոր:

Թէ հին և թէ նոր միշտ Ջէյթունի խնդիրն է. միթէ կարելի էր, որ Ջէյթունի տրուած մահացու հարուածն անտարբեր թողուր հայ սրտերն, որոց այնքան դիմիչ է այդ նուիրական անունը, ոչ միայն իբր հնութեան յիշատակ մը լոկ, այլ միշտ նոր կենդանութեան կոթող մը: Պօլիս գործի ձեռնարկեց, այլ ոչ յախուռն եռանդով, ոչ հրաբորբոք տնչիւնս, խիստ հսկողութիւն մը կը հարկադրէ զամենն ալ խոհեմ, աչալուրջ և սակաւախօս լինել:

Կազմվեցաւ յանձնաժողով մը, որոյ գոյութիւնն արդէն հող ևս ծանուցուեցաւ, որ պիտի աշխատի օգնութեան հասնել մեր տարաբաղդ Ջէյթունցիներու:

Յանձնաժողովոյ ծննդավայրն է Պօլսոյ Գասըպիւղ թաղ, որոյ վրայ դեռ նոր կը ղրկի Գամառ-Ռաթիայայի առթիւ: Գասը-գիւղի երիտասարդութեան մէջէն հինգ երիտասարդներ կազմեցին Ջէյթունի նպաստամատոյց յանձնաժողովը, որ վաւերացուելով Պատրիարքարանէն պաշտօնական կերպարանք առաւ և կը համարուի մի մարմին Պատրիարքարանի իրաւասութեան ներքև:

Երբ կըսեմ երիտասարդ, պէտք չէ կարծել 18—20 տարեկան թարմիկ անմօրուսներ, այլ 30—35 տարեկան անձինք, բայց այնքան կորովի և աչխոյժ, որպէս քսանամեայներ: Ժողովրդական անուններ և անդամոց անուններն. նախագահը պ. Պատրիկ Կիւլպէնկեանն է, որդի հանգուցեալ պ. Սերովբէ Կիւլպէնկեանի, որ այնքան սիրելի եղաւ հայ ազգի Հայաստանի սովելոց տարած խնամոցն համար: Եւ կարօտ ենք վաճառական, ընչաէաց դասէն ժողովրդական անուններու. պ. Կիւլպէնկեանի նախագահութիւնը ընդհանուր գըրաւական մ'է ձեռնարկին յաջողութեան համար: Յանձնաժողովոյ քարտուղարն է (պատուոյ քարտուղար և թոշակաւոր) պ. Մկրտիչ Մանուկեան, մի աղնիւ և պատուաւոր ուսեալ երիտասարդ, և կը պատկանի վաճառական դասուն, Պօլսոյ հրապարակին վրայ ամենէն լաւ անուն ունցողներէն. ամեն առեն աղքատին գործերու պարագլուխներէն մին. անխարդ ամեն դասակարգէ սէր ու յարգանք կը վայելէ:

Ի հարկէ, այս անուններու քով եղած միւս անուններն ալ ընտիր անուններ պէտք է լինեն և այնպէս ալ է. Սարգիսօֆ Գառնիկ, Թօփալեան Գէորգ, Բարաղամեան Տիգրան, Յակոբեմեան Մինրան լաւ համբաւ կը վայելեն և միշտ օգտակար կերպով ազգին ծառայողներ նկատուած են:

Յանձնաժողովը իւր նիստերը կը չարունակէ և կատարեալ համաձայնութեամբ կը գործէ. լաւական օգտակար միջոցներ ձեռք առած է չուտ Ջէյթունցիներու օգնութեան հասնելու: Առանց բացառութեան ամեն օր կը համակրէ այս յանձնաժողովոյ և նորա գործունէութեան:

Հրկիզման գլուխը չը փակած յիշեցնենք թէ ձեռնարկված է վերանորոգել ս. Կարապետի հայկակ եկեղեցին, որ այրեցաւ Իւսկիւտարի վերջի հրդեհին: Այդ մեծ եկեղեցու պատերը կանգուն կը մնան և մօտ 20,000 րուպլի ծախսով կարելի է վերածել զայն իւր նախկին վիճակին: Մի հարուստ հայ յանձնառած է վերանորոգումն ընել իւր ծախքովը: Այդ ոչինչ, և նորութիւն մը չէ, բայց ինչ որ տարօրինակ և մինչև իսկ անհաւատալի պիտի թուի այն է թէ այդ հարուստ հայը պայման դրած է, որ իւր անունը չը պիտի յիշուի լրագրաց մէջ, չը պիտի գրուի, գաղտնի պիտի մնայ:—Միթէ այսպիսի ընթացք մը բոլորովին հակառակ չէ մեր արդի բարուց:

—

Բայց մեր բարքերը տրամաբանութեան օրինաց չեն հնազանդիր, ինչպէս նաև մեր գործունէութիւնը, մեր խելքը դրեթէ միշտ բացառութեամբ կապրին, այս չէ պատճառը որ այժմ մի մեծ պատերազմ հրատարակուած է Զմիւռնիոյ առաջնորդ Մելքիսեդէկ սրբազանի դէմ: Հանրագրեր կուգան Պօլիս, ամբաստանութիւններ կը տեղան, Պատրիարքարան կը յուզուի: Մելքիսեդէկ սրբազանի ոչ բարեկամն եղած եմ, ոչ թշնամին. նրա գործունէութեան նկատմամբ թէ լաւ խօսած եմ թէ վատ, բայց չեմ դիտեր թէ ինչ պատճառ աւելի հակառակորդն համարուած եմ, քան բարեկամը. ինչ և է, բայց որովհետև հակառակորդը ճանչցուած եմ, ուրեմն կրնամ աւելի, քան այլ ոք ազատօրէն խօսել և ըսել թէ շատ անտեղի է Մելքիսեդէկ սրբազանի դէմ մղուած պատերազմը: Իրմիրե առնուած տեղեկութեանց համեմատ Մելքիսեդէկ եպիսկոպոս այժմ ներկայ պարադայից մէջ պէտք էր համակրութիւն գտնէր, վասն զի արժանապատուութեան խնդիր մը կայ:

Մելքիսեդէկ եպիսկոպոսի հակառակորդաց պարագլուխ կը հանդիսանայ մի իմիրցի հարուստ վաճառական, պ. Լայեան անուամբ: Այս վաճառականի աղգականներէն մին, մի Հաճի Սահմանայ, կը վախճանի վերջերս, առաջնորդ սրբազանը կարող չը լինէր նորա յուղարկաւորութեանը ընկերանալ որքան տեղ որ պէտք էր, անձնական անհանգստութեան և չքի պատճառաւ: Հաճի-աղային աղգականաց անձնասիրութիւնը կը վիրաւորուի և ահա կը սկսին մարտնչել ընդդէմ առաջնորդին:

Միթէ հանդուրժելի է սա:—Մի առաջնորդ կը ներկայացնէ Ազգային բարձրագոյն իշխանութիւնը, նա վեր է ամեն դասէ, նա հեզ և խոնարհ կրնայ ըլլալ, և պէտք է լինի, բայց ոչ ցած և սոսկին: Առաջնորդը կը բարեհաճի յուղարկաւորութեան մը երթալ կամ ոչ, նա պէտք է ազատ լինի: Եթէ առաջնորդ մը գիտնայ թէ ինք միշտ աղայներու առաջ պիտի խոնարհի, ապա թէ ոչ ինքը պաշտօնանկ կընենն, այնուհետև ուր կը մնայ առաջնորդին բարոյական ազդեցութիւնը, ուր կը մնայ նորա անկախութիւնը: Այս պարագային մէջ է ահա Մելքիսեդէկ սրբազան. պաշտպանելով Մելքիսեդէկ սրբազանը իրմիրցիք պաշտպանած պիտի լինեն հոգևոր իշխանութեան անկախութիւնը:

Մելքիսեդէկ եպիսկոպոսի հակառակորդ է այժմ նաև պ. Սպարթալեան. պատճառն հետեւեալը կըսուի: Իրմիրի դպրոցը նոր կառոյց պ. Սպարթալեան 50,000 րուբլի ծախսելով և պայման մը դրած է որ իւր տոհմէն ներկայացուցիչ մը պիտի գանուի դպրոցի հոգաբարձութեան մէջ. բայց վերջը տեսնելով թէ իւր տոհմէն յարմար անձ չը գտնուիր, կամ նրանք շատ զբաղված են, իւր կողմէն մի մարդ կը ներկայացնէ: Տոհմի և կողմի խնդիր մը կը ծագի. թուի թէ այս խնդիրն կարելի պիտի լիներ կարդադրել առանց մեծ զժուարութեան եթէ պ. Սպարթալեանի ներկայացուցած անձն յարմար մի ոք լիներ հոգաբարձութեան անդամակցելու, բայց այդպէս չէ եղած և հոգաբարձութեան միւս անդամները չեն ուզած ընկերակցել պ. Սպարթալեանի ներկայացուցչին ընդդէմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Սեպտեմբերի 28-ին

«Արձագանքի» վերջին համարը հաղորդում է մի միխիթարական լուր «Մշակի» վերաբերմամբ, թէ բագուի հասարակութեան մի մասի մէջ միտք է ծագել «Մշակը» նորից ամենօրեայ դարձնելու համար դիմել միջոցներին: Բագուն առաջին անգամը չէ, որ բարեգործութեան մէջ հռչակ է վայելում, նա՝ մինչև անգամ հանգուցեալ «Մեղուի» համար էլ երկու հազար րուբլի տուեց: Բայց այս տեսակ մի միտք ծագելով մի գաւառական քաղաքի մէջ, ինչպիսին Բագուն է, և, այն էլ հասարակութեան մի մասի մէջ, մեզ մտածել է տալիս մի անմիխիթարական կողմի վրա մեր հասարակութեան մէջ:

«Արձագանքը» շատ իրաւացի է նկատում, որ վաղուց է զգացվում մի ամենօրեայ յայտնի ուղղութեան լրագրի պահանջը. այդ ճշմարիտ է: «Մշակի» պէս մի լրագիր, որ 1872 թուից ապրելով հայ հասարակութեան մէջ, միշտ մղել է նրան դէպի առաջ, միշտ նոր մտքերի և նոր գաղափարների հետ է ծանօթացրել, միշտ առաջնորդել է նրան, միշտ բացել է նրա աչքը, հասկացրել նրան իր իրաւունքները, և պարտաւորութիւնները, որ հասունացրել է նրան, որ ստեղծել է գաւառական ինտելիգենցիա, որ զարկ է տուել բազմաթիւ դպրոցների բացման, թատրոնի հիմնարկութեան, որ կրթել է գաւառական թղթակիցների մի լեգէոն, նոյնպէս յայտնի գրողների մի շարք, որ ստեղծել է ընթերցող հասարակութիւն, պատրաստել է ուրիշների համար հող, որի վրա ուրիշները այսօր ցուցամոլութեամբ սերմեր են ցանում, միայն իրանց վերաբերելով պատիւը, որ պատրաստել է կերակուր, և այսօր, օր ցերեկով մեր աչքի առաջ անկոչ հիւրեր, հանելով իրանց գօտիից զրգալը սկսել են վայելել.... ահա այդ

Ա. ՄԱՐ.

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի 23-ին

Նոյեմբերի 23-ին, սովորական ժամանակից 2 ժամ առաջ, Ազգային ժողովի նախագահ Ալեքսանդր Խատիսեանը հրաւիրեց ժողովականներին ներկայ գտնուելու համար նոր կառավարութեան կազմութեան առթիւ կատարուելիք հանդիսաւոր արարողութեան։ Ժամը 3-ին ներկայ էին 80 պատգամաւորներ։ Ներկայ էին նաեւ նախարարներ։ Ժողովը բացուեցաւ ժամը 3-ին։

Նախագահ Ալեքսանդր Խատիսեան։ Պատուական պատգամաւորներ, ես ուրախ եմ ձեզ տեսնելու ներկայ հանդիսաւոր պահուն, երբ ազգային ներկայացուցչական մարմինը ներկայ է նոր կառավարութեան կազմութեան։ Ես ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ

«New-Iork Times» լրագիրը հաղորդում է, որ մի ամերիկական ինժեներ հնարել է մի չատ հետաքրքիր մեքենայ թռչելու համար: Այդ մեքենայի հետ արած փորձերը աջողութիւն ունեցան: Այդ ինժեները մի ժամվայ միջոցում գրէթնվալ քաղաքում բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ թռչում էր մի ժամվայ միջոցում զանազան ուղղութիւններով և զանազան արագութիւնով: Մի փոքր իրան զոռ տալով քամու օդնութեամբ նա արագութիւնը հասցնում էր մինչև 7 մղոնի (մի ժամվայ մէջ): Լրագրի ասելով մեքենան յարմարեցնւում է մարմնին փոկերի օգնութեամբ որ ամրացնում է կռնակին չանգալների միջոցով: Կրծքի վրա դնում է մի էլեկտրական գործիք, որ յարաբերութիւն ունի բազմաթիւ փոքրիկ առագաստների հետ, որոնք թռչելուն տալիս են հարկաւոր ուղղութիւնը: Ամբողջ մեքենան կառավարվում է չատ պարզ կերպով էլեկտրական մեքենայի կոճակը հոգ տալով և այդպիսով բոլորովին չեն յոգնում մկանունքները:

* * *

Մի երիտասարդ դիմելով իր մի ծանօթ օրիորդին ասում է.

—Մի չաբաթ առաջ դիւզումն էի, մի ծանօթ կալուածատիրոջ մօտ, բայց որքան ձանձրալի են առհասարակ այդ կալուածատէրերը իրանց միակողմանի սովորութիւններով. հէնց որ մարդը գալիս է մի կալուածատիրոջ մօտ, սա անմիջապէս տանում է իր հիւրին դէպի ախոռը իր տաւարը ցոյց տալու համար:

—Բայց մենք, քաղաքի բնակիչներս, նոյնը չենք անում միթէ, պատասխանում է օրիորդը: Հէնց որ գալիս է մեզ մօտ մի հիւր, մենք անմիջապէս սկսում ենք ցոյց տալ նրան մեր ապգականների ու ծանօթների լուսանկար պատկերների ալբոմները:

* * *

Մի պարոն սաստիկ լաց է լինում իր կնոջ մահվան պատճառով:

—Ոչինչ այլ ևս կեանքի մէջ չէ կարող ինձ փոխարինել իմ մեծ կորուստս, իմ սիրելի կնոջս մահը, կրկնում էր նա անդադար, հեկեկալով. մի բան միայն ինձ մխիթարում է, այդ այն է որ կարող էր դրանից էլ մեծ դժբաղդութիւն պատահել....

—Էլ դրանից ինչ աւելի մեծ դժբաղդութիւն կարող էր ձեզ պատահել, հարցրեց անմխիթար ամուսնուն իր բակամներից մէկը:

—Ինչպէս թէ ինչ աւելի մեծ դժբաղդութիւն.... Ես կարող էի մեռնել, էլի....

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի: Սենատի քրէական վճռաբեկ բաժինը, քննելով Մոսկվայի օտարազգի վաճառական Շպերլինգի դանգատը Մոսկվայի դատաստանական պալատի դէմ, որը դատապարտեց Շպերլինգին 500 րուբլու տուգանքի, որովհետև նա Լէյպցիգի ապահովական ընկերութեան անունից ապահովացնում էր կեանքը, և որը մի և նոյն ժամանակ պարտաւորեցրեց նրան փակել այդ ընկերութեան գրասենեակը, որոշեց՝ թէ սրա նման գործակալութիւնները թոյլատրված չեն Ռուսաստանում առանց 500 հազար րուբլու գրաւականի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի: «Минута» և «Сынъ Отечества» լրագիրների հատով ծախելը արգելված է:

ՓԱՐԻԶ, 1 հոկտեմբերի: Ձկնաւորական քննական յանձնաժողովը միաձայն վճռեց. գեներալ կօֆօրէլին արձակել ծառայութիւնից պինուորական պատւի դէմ արած յանցանքի համար:

ԼՕՆԴՕՆ, 1 հոկտեմբերի: Տրաֆալգար-սկվէրում, անպօրծ մնացած բանւորները միտինգ կազմեցին. նրանք միտինգից յետոյ սպառը պրօշակներ ձեռքին՝ գնացին դէպի Սիտի: Անկարգութիւններ չը պատահեցան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի: «Journal de St. Petersbourg» կատարելապէս հերքում է և հնարովի բան է համարում ֆրանսիական մի քանի լրագիրների հաղորդած լուրը, որ իբր թէ կայսերական ընտանիքի անդամներից մէկը կենաց է առաջարկել ֆրանսիական նաւի վրա, որով օդոստափառ ճանապարհորդը վերադառնում էր Ամերիկայից:

ՐԻԴԱ, 2 հոկտեմբերի: Այսօր ծովում է այստեղի բազմարուեստեան դպրոցի քսան և հնգամեակը: Երէկ այդ առիթով հանդիսաւոր ջահահանդէս կայացաւ: Բազմարուեստեան դպրոցում ուսանողների թիւը 798 է:

ՓԱՐԻԶ, 2 հոկտեմբերի: Պատերազմական մինիստրը գրաւոր հարցում արաւ դեներալ Բուլանժէից թէ արդեօք ճշմարիտ են այն խօսքերը, որ մի քանի լրագիրներ վերագրում են նրան (Բուլանժէին) մինիստրի ընտրիգների վերաբերութեամբ նրա անձի դէմ: Բուլանժէ պատասխանեց, որ այդ լրագիրները ինքն չէ կարդացել: Մինիստրը այդ պատասխանը անբաւարար գտաւ և վերջնական բացատրութիւններ պահանջեց և եթէ երկրորդ անգամ էլ անբաւարար պատասխան ստացվի, մինիստրը դիւանագիտութիւն ունի դիսցիպլինային պատասխանատուութեան ենթարկել Բուլանժէին: «Temps» լրագիրը հերքում է այն լուրերը, որ իբր թէ Ռուսաստանը և Ֆրանսիան դիւանագիտութիւն ունեն առաջարկել՝ եւրոպական կօնֆէրենցիա կազմել բոլգարական խընդիրը վճռելու համար: Մարօկկոից ստացված տեղեկութիւնների համեմատ, սուլթանը աւելի լաւ է զգում իրան և երևում է ժողովրդին:

ՓԱՐԻԶ, 2 հոկտեմբերի: Բուլանժէ պատասխանեց Ֆերրօնին, որ ինքն յիրաւ ասել է այն խօսքերը, որ լրագիրները իրան են վերագրում:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԲԱԳՈՒ. Շահէն. Ձուր էք կարծում որ մեր պատասխանը ձեզ էր վերաբերվում: Դուք ձեր նամակը ստորագրած էիք ձեր ամբողջ անունով, իսկ մենք պատասխանեցինք մի այլ պարոնի, որը իր նամակի տակ ամենևին չէր ստորագրել ոչինչ անուն:

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. Հայկ Ափրիկեանց. Վաղուց է արդէն ձեր եղբօրը «Մշակ» ուղարկում ենք Իտալիայի Միլանօ քաղաքը և միշտ ճիշդ կերպով ենք ուղարկում: կարող էք փոստում տեղեկանալ:

ՆՈՐ-ՋՈՒՂԱ. Փ. Ձեր կարծիքով «Մշակի» բանասիրականները լաւ չէն, և այդ պատճառով դուք ձեր բանասիրականն էք ուղարկում, ոտանաւորներով հանդերձ, «Մշակի» էջերը զարդարելու համար: Բայց խոստովանվում ենք՝ ձեր բանասիրականը, որը պէտք է զարդարէ մեր ընթերցողներին բ ա ր ո յ ա պ է ս և ֆ ի լ ի կ ա պ է ս (?) չվիլց դուրս լաւ է մեզ համար: Ափսոս չը այդքան հրաշալի բան «Մշակի» մէջ տպել....

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱԺԵԿԱՊԵՏ ՏԷՐ-ՋԱՆԵԱՆՑ

բնակվում է այժմ վ. էչմիամինովսկայա փողոցի վրա, Մեգվինովի տանը, № 10: Հիւանդներին ընդունում է, ինչպէս և առաջ, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժ.:

1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Շորեքշաբթի, հոկտեմբերի 14-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, կ. Պօլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Յարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, Նախկին Ազնաւրեան դպրեվրեում, № 103.

2—4

ԴՊՐՈՑ, ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ և ՊԱՆՍԻՕՆ օրիորդ Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆՑԻ գեռեղվում է Ֆրէյլինսկայա փողոցում, Պետական բանկի դիմաց, տուն № 8.

Ընդունվում են աշակերտներ Գիմնազիայի առաջին դասատան համար պատրաստվելու:

2—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Ձափաւոր վարձատրութեամբ յանձն է առնում պատրաստել երեխաներին միջնակարգ ուսումնարանների ստորին դասատների համար: Հասցէի համար դիմել „Մշակի“ խմբագրութեանը:

11—15

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ՍԷՐԳԷՅ ՎԱՍԻԼԻԵՎԻՉ ՉԷՄԷՍՕՎ

անցաւ Աբսհնաշնայա փողոցը, տուն Գօլբունօվի, № 66, նախկին Ամեռնայի կրուժօկի հետև:

3—6

Մի Հայ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ ակարութեան պատճառով չը կարողացաւ շարունակել իր ուսումը Լազարեան ճեմարանում, վերադառնալով Թիֆլիս, ցանկանում է մի որ և է, օրինակ, գրադրի գործ ունենալ վաճառատներում, կամ այլ հիմնարկութիւնների մէջ:

3—3

EXPORTATION-IMPORTATION

CONSTANTIN P. CHÉHIANTZ

MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. Շեհեանցի առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվէյցարիայի և Ֆրանսիայի Ֆաբրիկանտների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բօժօժ, մետաքսի և բօժօժի թևացորդք, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և ընդհանրապէս կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են եւրոպայում: Յանձնարարութեամբ կընդունի գործել առնել եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնտու պայմաններով փող կը տայ ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հասցէով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) МИЛАНЪ (Италія).

Մի հայ տիկին ցանկանում է մանուկը դասեր ունենալ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ. դիմել „Մշակի“ խմբագրութեանը:

3—3

ԲԻԼԻԱՐԴԻ գնաեր մեծ ընտրութեամբ, կիյներ և կաշիներ նրանց համար ծախվում են ճախարակադործ վարպետ (տոկար) Վ. ԳԱՎԼԻԿՕՎՍԿՈՒ մօտ, ՕԴԻՍԱՅՈՒՄ, տուն Շվարցի, կրասնի պէրէուլօկ, № 3.

5—10 (4)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՓԼՏՈՒԹԻՒՆ ՍՏԱՑՎԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՅ

ՄԵԾ ԵՒ ՓՈՒՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար: Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի 1/4 արժէ 60 կ.:

Հեղուկ բաղնիքների դէմ: Սրսուակի գինը, վրձինով միասին 1 րուբլի:

Լուս, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի: Դօրակի գինը 1 ր. 20 կ. գուտապերչի մեքենան առանձին. 1/2 դօրակ 65 կ.

Սմբակային օծուն, իմա գուտաման, ձիերի սմբակները ամեն օր օծելու համար, պահպանում է սմբակը ճաքելուց և նալելու միջոցին թուլանալուց: Դօրակի գինը 1 րուբլի:

Կուղբի ճարպի օծուն, պահում է խոնաւութեան դէմ և կակուղ դրութեան մէջ՝ կօշիկները, բօթինները, ձիերի սանձերը: Գինը 75 կօպ.

Մազերի ներկ, սև, չափանակադոյն և չէկ: Մի անգամ ներկված մազերը իրանց գոյնը պահում են մինչև վեց չաբաթ: Ներկված մազերը չէ կարելի զանազանել բնական մազերից: Արկղիկը 3 րուբլի.

Իմա. Գուտաման

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գ ր ի վ ն ա կ ի դեղատան ապրանքների մագազինում, «Լնդեղօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը:

60—100

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՒԱՂԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(կուկիա, վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, վեներական և աւտամի յ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—9—10 ժ. և 11—12 ժ. կանանց և երեխայոց յ.
ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց յ.
Ա. ԳՈՒՐԿՕ—12½—1½ ժ. աչքի և ներքին յ.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ կանանց յ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
ՊՕՊՕՎԵԱՆՑ—6—7 ժ. կաշուի, ներքին և ջղային յ.
Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մօզեր:
վճար—50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ:

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Дозволено цензурою, Тифлисъ 2 октября 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.